ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 06.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/46

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Ռեգնում» ՍՊԸ-ի 15.11.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից նյութերը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) գրավոր դիրքորոշումը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Ռեգնում» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Ռեգնում» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 15.11.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«19.04.2017թ. կայացած «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով բեռնատար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայության ձեռք բերման շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգով 3-րդ և 4-րդ չափաբաժիններով հայտ է ներկայացրել «Ռեգնում» ՍՊԸ–ն:

Պատվիրատուի՝ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովը 19.04.2017թ սկսված և 03.05.2017թ. ավարտված նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշման 2.3 կետով մերժել է «Ռեգնում» ՍՊԸ-ի հայտը՝ պատճառաբանելով, որ.

«Հայտով ներկայացված գնային առաջարկը սխալ է ներկայացված՝ մասնավորապես, գնային առաջարկում ԱԱՀ-ի հաշվարկը չի համապատասխանում ԱԱՀ-ի մասին օրենքի պահանջներին, ինչի հիման վրա գնահատող հանձնաժողովը վերջինիս հայտը մերժել է»:

Որոշման դեմ «Ռեգնում» ՍՊԸ-ն 05.05.2017թ. բողոք էր ներկայացրել ՀՀ Գնումների բողոքարկման խորհուրդ: Գնումների բողոքարկման խորհուրդը 02.06.2017թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/05 որոշմամբ ամբողջովին բավարարել է «Ռեգնում» ՍՊԸ-ի բողոքը և դադարեցրել է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումները: (Բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/05 որոշումը հրապարակվել է www.gnumner.am կայքում 07.06.2017թ.:):

03.05.2017թ. նույն որոշմամբ 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչել «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին: 06.05.2017թ. հրապարակել է պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Որոշման դեմ «Ռեգնում» ՍՊԸ-ն 15.05.2017թ. բողոք էր ներկայացրել ՀՀ Գնումների բողոքարկման խորհուրդ:

Գնումների բողոքարկման խորհուրդը 02.06.2017թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/05 որոշմամբ ամբողջովին բավարարել է «Ռեգնում» ՍՊԸ-ի բողոքը և դադարեցրել է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումները:

Քսան աշխատանքային օր հետո, ՀՀ ՊՆ գնահատող հանձնաժողովը՝ պատասխանելով Գնումների բողոքարկման խորհրդի 29.06.207թ. գրությանը, միայն 01.07.2017թ. թիվ ԴՎԱ/2066 գրությամբ, որը մուտք է եղել ՀՀ ֆինանսների նախարարություն 04.07.2017թ. (մտից 29702, պաշտոնապես դիմել է Բողոքարկման խորհրուրդ առ այն, որ կատարվել են իրավապարտադիր որոշման պահանջները, այն է՝ դադարեցվել են գնահատող հանձնաժողովի որոշումները:

Պատասխանը հրապարակվել է www.gnumner.am կայքում 05.07.2017թ.:

Գնահատող հանձնաժողովը՝ հաստատելով իր գործելաոճում ամենաթողությունը, կամայականություններն ու անպատժելիությունը, 10.07.2017թ. կայացրել էր իր հերթական անօրինական որոշումը՝ «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով՝ նորից 2-րդ անգամ մերժելով «Ռեգնում» ՍՊԸ-ի հայտը և 2-րդ անգամ 1-ին տեղ զբաղեցնող ճանաչեց «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին:

Մեջբերում եմ.

«...«Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից ներկայացված միավորի գների հանրագումարը պակաս է «Լավ Ընկեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված միավորի գների հանրագումարից, սակայն «Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից ներկայացված միավորի գները 1369 տողում բարձր են պատասխանատուի կողմից սահմանված նախահաշվային միավորի գներից, «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ քննարկելով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները, կից միավորի գները (Հավելված 4, Հավելված 4.1) և հիմք ընդունելով «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջները (Հավելված 4–ում սահմանված), որոշեց 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին:

10.07.2017թ. հրապարակվել է նաև ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշումը: Որոշումը հրապարակվել է www.gnumner.am կայքում 11.07.2017թ.:

14.07.2017թ. վերոնշված որոշման դեմ «Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացվել է բողոք՝ այն դադարեցնելու պահանջով, որը գնումների բողոքարկման խորհրդի 14.08.2017թ. ԳԲԽ–ԷՍ-2017/24 որոշմամբ բավարարվել է և արձանագրվել է, որ գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ:

Գնահատող հանձնաժողովը, չունենալով այլ ելք, քան «Ռեգնում» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելը, Բողոքարկման խորհրդի կայացրած իրավապարտադիր որոշումից շուրջ 2 ամիս հետո, 11.10.2017թ. հանձնաժողովը Ընկերությանը գների նվազեցման շուրջ հրավիրել է բանակցությունների, որի ծանուցումը ուղարկվել է 29.09.2017թ.:

Մեր կարծիքով, բանակցությունների անհրաժեշտություն որպես այդպիսին չկար, քանի որ Ընկերությունը և Բողոքարկման խորհրդին, և Պատվիրատուին հայտնել էր իր պատրաստակամությունը հավելված 4.1-ում նշված տողերում գների նվազեցման վերաբերյալ:

16.10.2017թ. գնահատող հանձնաժողովը «Ռեգնում» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից 3-րդ չափաբաժնում և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու որոշում է կայացրել:

Հանձնաժողովը՝ նպատակ ունենալով հաղթող Ընկերության առջև մշտապես խոչընդոտներ ստեղծելու և բոլոր հնարավոր միջոցներով հաղթող ճանաչել «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին, ակնհայտ անգործության բացահայտ դրսևորում է ցուցաբերում իր

աշխատելաոճում, քանի որ անհարկի ձգձգում էր Բողոքարկման խորհրդի իրավապարտադիր որոշումների կատարման ժամկետները:

Պարզ թվաբանությամբ՝ հանձնաժողովի կողմից անգործության արդյունքում բաց թողնված ժամանակը կազմում է ավելի քան երեք ամիս:

Հարկ է նշել, որ գնահատող հանձնաժողովը կոպտորեն, ակնհայտ և ընդգծված է խախտում գնումներին վերաբերվող օրենսդրությունը, հատկապես.

Օրենքով բողոքարկման խորհրդի որոշումներն իրավապարտադիր են:

Համաձայն ՀՀ կառավարության N 168-Ն որոշման XX բաժնում նախատեսված ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ-ի 115-րդ կետի՝ Բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն չի փոփոխվել կամ դատական կարգով անվավեր ճանաչվել:

Նույն կարգի՝

116-րդ կետի համաձայն՝ Բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշման կատարման մասին տեղեկատվությունն այդ որոշման հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն գրավոր ներկայացնում է կենտրոն, որը հաշվառվում է կենտրոնում:

121-րդ կետի համաձայն՝ եթե տրամադրված պարզաբանման արդյունքում պարզվում է, որ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշումը չի կատարվել պատվիրատու ի պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության հետևանքով կամ սահմանված ժամկետում չի տրամադրվում պարզաբանում, ապա կենտրոնը դրա մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը և այդ տեղեկատվությունը, ինչպես նաև պատվիրատուի պարզաբանումը նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:... »:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Պատվիրատուի՝ ՀՀ պաշտպանության նախարարության գնահատող հանձանաժողովը 19.04.2017թ. սկսած միտումնավոր խոչընդոտներ է ստեղծել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 3-րդ չափաբաժնով արդեն հաղթող ճանաչված «Ռեգնում» ՍՊԸ-ի նկատմամբ:

Հանձնաժողովն արդեն երրորդ անգամ փորձում է ամեն գնով 3-րդ չափաբաժնով հաղթող ճանաչել «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին:

Երկու անգամ տարբեր պատճառներով անհիմն մերժել է «Ռեգնում» ՍՊԸ-ի հայտը և երկու անգամ էլ «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին հաղթող է ճանաչել:

Որոշումների դեմ «Ռեգնում» ՍՊԸ-ն երկու անգամ՝ 05.05.2017թ. և 14.07.2017թ. բողոք է ներկայացրել ՀՀ Գնումների բողոքարկման խորհուրդ:

Բողոքարկման խորհուրդը իր համապատասխանաբար 02.06.2017թ. ԳԲԽ-ԷՍ-2017/05 և 14.08.2017թ. կայացրած ԳԲԽ–ԷՍ-2017/24 որոշումներով էլ բավարարել է ներկայացված բողոքները և դադարեցրել է գնահատող հանձնաժողովի որոշումները:

Հանձնաժողովը գիտակցել է, որ որքան ձգձգվի «Ռեգնում» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելը, այնքան քիչ ժամանակ կմնա պայմանագիր կնքելուն և հետևաբար, գուցե և Ընկերությունը ի վիճակի չլինի պայմանագրի ստորագրման դեպքում կատարելու պայմանագրային պարտավորությունները:

Այդ է պատճառը, որ Բողոքարկման խորհրդի կայացրած իրավապարտադիր որոշումից շուրջ 2 ամիս հետո է միայն 11.10.2017թ. հանձնաժողովը Ընկերությանը գների նվազեցման շուրջ հրավիրել է բանակցությունների:

Հանձնաժողովը՝ 11.10.2017թ. ընթացակարգի 3-րդ չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչել «Ռեգնում» ՍՊԸ-ին:

Վերջապես՝ 16.10.2017թ. գնահատող հանձնաժողովը «Ռեգնում» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից 3-րդ չափաբաժնում և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու որոշում է կայացրել:

Կանխորոշելով հանձնաժողովի նպատակները 17.10.2017թ. թիվ Դ-172 և Դ-173 գրություններով դիմել ենք գնահատող հանձնաժողովին և ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ-ին, ներկայացնելով մեր դիրքորոշումները կնքվելիք պայմանագրի նախագծի վերաբերյալ:

Ընկերությունը առաջարկել է պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել վեց ամիս՝ կնքման պահից և նախատեսել կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայությամբ:

Մեր առաջարկները հիմնավորել ենք հետևյալ մոտեցումներով.

ա) Պայմանագրի ժամկետի երկարացումը անհրաժեշտ է՝ հաշվի առնելով պայմանագրի կատարման համար հրավերով սահմանված ժամկետի բաց թողնված ժամանակը՝ հրավերով նախատեսված է եղել, որ ծառայությունների մատակարարումը պետք է կատարվի 2017թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում, բայց ոչ ուշ, քան

10.12.2017թ., ինչպես նաև այն, որ նույն ընթացակարգի մյուս չափաբաժիններով պայմանագրերը կնքվել են 09.06.2017թ. և պայմանագրի գործողության ժամկետը կազմում է վեց ամիս: (Հիմք՝«Գնումների մասինե ՀՀ ՀՕ-206-Ն օրենքի 3-րդ հոդված՝ գնման գործընթացի կազմակերպման միասնական կանոններ և մասնակիցների իրավահավասարություն):

բ) պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգելու պարագայում, կանխավճար հատկացնելը անհրաժեշտ է, քանի որ կանխավճար չհատկացնելու դեպքում պատվիրատուն հետագայում չեր կարողանալու վճարումներ իրականացնել մատակարարված ծառայությունների դիմաց: (Հիմք՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 29.12.2016թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» թիվ 1313-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետ):

գ) միատեսակ փաստական հանգամանքներում՝ 2016թ. անցկացված «ԳԱԿ-ՇՀԾՁԲ - 15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/5» շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը, որի արդյունքում 07.12.2016թ. կնքված թիվ ՇՀԾՁԲ-4/5-2 պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվեց և բանկային երաշխավորությամբ հատկացվեց նաև կանխավճար: (Հիմք՝ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածներ):

Մեր առաջարկները հիմնավորել ենք նաև՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ ՀՕ-206-Ն օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետը, այն է գնման հետ կապված կողմերի՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են պայմանագրով:

ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի՝

448-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ: Էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի:

467-րդ հոդվածի համաձայն՝ հանգամանքների, որոնցից ելել էին կողմերը պայմանագիրը կնքելիս, էական փոփոխությունը հիմք է պայմանագրի փոփոխման կամ լուծման համար, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով կամ չի բխում դրա

էությունից: Հանգամանքների փոփոխությունն էական է համարվում, եթե դրանք այնքան են փոփոխվել, որ եթե կողմերը կարողանային դա ողջամտորեն կանխատեսել, նրանց միջև կկնքվեր էականորեն տարբեր պայմաններով պայմանագիր կամ ընդհանրապես պայմանագիր չէր կնքվի:

«Գնումների մասին» ՀՀ ՀՕ-206-Ն օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի՝ ինչպես նաև Պատվիրատուի 07.04.2017թ. հրապարակված հրավերի տեքստի 9.4 կետի համաձայն՝ մինչև սույն հրավերի 9.3 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

23.10.2017թ. ստացել ենք գնահատող հանձնաժողովի՝ բոլոր անդամների ստորագրությամբ պատասխանը այն մասին, որ վերոնշված հարցերով հանձնաժողովը լիազորություններ չունի, նաև տեղեկացվել է, որ հրավերով կանխավճար նախատեսված չի եղել և ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 10.12.2017թ.:

Հարկ է նշել, որ հանձնաժողովը չի կիրառում հրավերի 9.4 և 10.3 կետերը, որոնք հանձնաժողովը կարող է կիրառել, այն է՝ մինչև սույն հրավերի 9.3 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնմանառարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

10.3 կետի համաձայն՝ պայմանագրով Պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակից ընախապես Պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարիչափով, երաշխիքիձևով (օրինակելիձևը՝ըստՀավելված 11-ի), ընդորում՝ պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար պետք է նշվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը: Կանխավճարի մարման կարգը սահմանած է պայմանագրի նախագծով: Նույն դրույթներն են ամրագրված նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետը և 33-րդ հոդվածի 4-րդ կետը, որոնք չեն արգելում պատվիրատուին պայմանգրում կատարել փոփոխություններ և նաև կանխավճար նախատեսել:

24.10.2017թ. ստացել ենք նաև ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ-ի ԴՎԱ/3777 գրությունը, որով ըստ էության ոչ մերժվել և ոչ էլ ընդունվել են մեր առաջարկներն ու հիմնավորումները, գրությամբ ասվում է, որ նախ պետք է կնքել առաջարկվող պայմանագիրը այնուհետև անդրադառնալ խնդրո առարկա հանդիսացող հարցադրումներին, համապատասխան գրություն ներկայացնելով պատվիրատուի ղեկավարին:

Նույն օրը՝ 24.10.2017թ. թիվԴ-178 գրությամբ դիմել ենք ՀՀ պաշտպանության նախարարին՝ ներկայացնելով մեր հիմնավորումները և առաջարկները:

27.10.2017թ. էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցմամբ ստացել ենք Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման N ՇՀԾՁԲ-4/2-5 պայմանագրի նախագիծը:

31.10.2017թ.թիվ Դ-183 և Դ-184 գրություններով, նույնաբովանդակ խնդրանքով, նորից ենք դիմել գնահատող հանձնաժողովին և ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ-ին, հայտնել ենք նաև, որ դիմել ենք ՀՀ Պաշտպանության նախարարին և պատասխանը ստանալուց հետո Ընկերությունը կտեղեկացնի իր հետագա քայլերի մասին:

Նշվել է նաև, որ Ընկերությունը ստորագրելով այդօրինակ բովանդակությամբ պայմանագիր, որը հետագայում հնարավոր չլինի փոփոխել՝ կհայտնվի անելանելի վիճակում:

Միատեսակ փաստական հանգամանքներում՝ 2016թ. անցկացված «ԳԱԿ-ՇՀԾՁԲ -15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/5» շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը, որի արդյունքում 07.12.2016թ. կնքված թիվ ՇՀԾՁԲ-4/5-2 պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվեց և բանկային երաշխավորությամբ հատկացվեց նաև կանխավճար:

ՀՀ պաշտպանության նախարարությունը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով հանդիսանում է վարչական մարմին: Նույն օրենքի՝

3-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

1) վարչական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ՝

ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ, «Տեսչական մարմինների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բողոքարկման հանձնաժողով և Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ.

7-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք: Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ: Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով:

Վարչական մարմինն այդ սահմանափակումից կարող է հրաժարվել, եթե գերակա շահի առկայության պատճառով նա հետագայում մտադիր է մշտապես ընդունել մեկ այլ հայեցողական որոշում:

8-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Այս պահից սկսած սկսվել է հանձնաժողովի և ՆՏԱ դեպարտամենտի օպերատիվ աշխատանքը, այսպես.

01.11.2017թ. ստացել ենք հանձնաժողովի նույնաբովանդակ պատասխանը: 02.11.2017թ-ից փորձել ենք հանդիպել ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ-ի հետ, սակայն չի հաջողվել:

ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ-ի և պաշտպանության նախարարի պատասխանները առ 06.11.2017թ. չենք ստացել:

07.11.2017թ. ՊՆ ներքին հեռախոսով կապվել ենք ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ պարոն Կ.Կարապետյանին, որը մեզ չի ընդունել և որի միջնորդությամբ, եղել ենք գնահատող հանձնաժողովի նախագահ Հ. Կարապետյանի մոտ:

Ներկայացրել ենք պայմանագրի նախագիծը տպված տարբերակով՝ մեր կողմից առաջարկվող փոփոխություններով և առաջարկել ենք կնքել այն, սակայն, ինչպես և սպասում էինք, այն չընդունվեց: Նաև չառաջարկվեց կնքել իրենց կողմից առաջարկված տարբերակով պայմանագիրը:

07.11.2017թ.-ին ժամը 14:18-ին ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ-ի էլ. փոստին՝ կից գրությունով, որտեղ ևս մեկ անգամ հիշեցրել ենք, որ սպասում ենք նախարարի պատասխանին, ուղարկել ենք պայմանագրի նախագիծը:

07.11.2017թ. էլ. տարբերակով, ժամը 17:52 ստացել ենք ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ-ի թիվ ԴՎԱ/3971 պատասխանը, որով տեղեկացրել է, որ բարձրացված հարցերին անդրադառնալու համար անհրաժեշտ էր նախ կնքել պայմանագիրը, որից հետո անդրադառնալ խնդրո առարկա հանդիսացող հարցադրումներին:

Գրությամբ տեղեկացվել է նաև, որ Ընկերությունը 06.11.2017թ. դրությամբ չի ներկայացել և պայմանգիր չի կնքել, իսկ պայմանագրի կնքման վերջնաժամկետն էր 01.11.2017թ.:

Հարկ է նշել, որ հրավերով նախատեսված է, որ պայմանագիրը կնքվում է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը ստանալուց հետո 5, իսկ հանձնաժողովի 16.10.2017թ. որոշմամբ՝ 7 օրացուցային օրվա ընթացքում՝ այսինքն՝ վերջնաժամկետն է 02.11.2017թ:

08.11.2017թ. ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ-ի էլեկտրոնային փոստին ուղղարկել ենք թիվ Դ-188 գրությունը, որով հիմնավորել ենք ինչպես մեր առաջարկները և դրանց հետևանքով հնարավոր մտավախությունը, այնպես էլ պայմանագիր կնքելուն չներկայանալու մեր հիմնավորումները:

Հայտնել ենք նաև, որ պայմանագրի գործողության ժամկետի հնարավոր երկարաձգման երաշխիքների առկայությամբ պատրաստակամ ենք կնքելու պայմանագիրը:

08.11.2017թ. ոչ ավտոմատ ծանուցմամբ ստացել ենք գնահատող հանձնաժողովի կողմից շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգով 08.11.2017թ. կայացված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը, որով, հանձնաժողովը նորից բացահայտ և նպատակամղված, արդեն երրորդ անգամ մերժեց «Ռեգնում» ՍՊԸ-ի մասնակցության, առաջարկվող պայմանագրի նախագծի վերաբերյալ հիմնավորված առաջարկներ ներկայացնելու և ի վերջո պայմանագիր կնքելու օրինական իրավունքը և «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին երրորդ անգամ հաղթող է ճանաչել:

Բողոքարկման գործընթաց սկսելու հիմնավորումները.

Բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքի վերաբերյալ բողոքարկման խորհրդի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ Ընկերության հետագա գործունեության վրա, ինչպես նաև ՀՀ գնումների մասին օրենսդրության միատեսակ կիրառության համար,

մասնավորապես, ՀՀ«Գնումների մասին» ՀՕ-206-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ամրագրված սկզբունքների կիրառումը, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Հանձնաժողովը մշտապես է խախտել ՀՀ կառավարության N 168-Ն որոշման XX-րդ գլխի 115-րդ և 116-րդ կետերի պահանջները:

Հանձնաժողովը ուղղակի հնարավորություն չի ընձեռել և չի կիրառել, խախտել է «Գնումների մասին» ՀՕ-206-Ն ՀՀ օրենքի 3-րդ, 32-րդ հոդվածի 3-րդ կետը, 33-րդ հոդվածի 4-րդ կետը, 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ և 467-րդ հոդվածների պահանջները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածները:

Առկա է գնումների գործընթացի, գնումները կարգավորող օրենսդրական այլ ակտերի պահանջների խախտում, կամ դրանց այլ, կամայական մեկնաբանություններ, նաև միտում՝ հանձնաժողովի կողմից, նույնիսկ առանց հիմնավորումների, ցանկացած մեթոդներով նախընտրելի մասնակցին հաղթող ճանաչելու համար, որոնք հանգեցրել են գնումների մասնակիցների գնումներին մասնակցելու իրավունքի խախտման:

Չընդունելով Ընկերության կողմից ներկայացված պայմանագրի ժամկետի վերանայման առաջարկները, պայմանագրի գործողության ժամկետը սահմանելով 10.12.2017թ. հաշվի չառնելով պայմանագրի կատարման իրատեսական ժամկետները, փաստորեն Պատվիրատուն խախտում է նաև միջազգային «Պետական գնումների մասին վերանայված համաձայնագիր»-ը (ՀՀԱԳՆՊՏ 2015.10.21/3(33), որին ՀՀ-ն միացել է 2015թ. հունիսի 5-ից:

Նշված համաձայնագրի 10-րդ գլխի 8-րդ կետի համաձայն՝ գնվելիք ապրանքների առաքման կամ ծառայությունների մատուցման համար ցանկացած ամսաթիվ սահմանելիս՝

պատվիրատուն պետք է հաշվի առնի այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ գնման բարդությունը, ենթադրված ենթապայմանագրերի չափը և իրատեսական ժամկետը, որը պահանջվում է ապրանքների արտադրության, մատակարարման կետից դրանք վերապահեստավորելու և տեղափոխելու կամ ծառայությունների մատուցման համար:

Ելնելով վերոգրյալներից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՕ-206-Ն ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 32-րդ հոդվածի 3-րդ կետը, 33-րդ հոդվածի 4-րդ կետը, 6-րդ հոդվածի 1-ին կետը,ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի 448-րդ և 467-րդ հոդվածների պահանջները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածները,«Գնումների մասինեՀՕ-206-ՆՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, 47-րդ հոդվածի 3-րդ մասը, 48-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերը և 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, 49-րդ հոդվածը»:

Ընկրությունը բողոքով խնդրել է.

1.Բողոքն ընդունել վարույթ.

2.Դադարեցնել գնահատող հանձնաժողովի կողմից շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգով 08.11.2017թ. կայացված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն Վիտալի Ավագյանը և լիազորված ներկայացուցիչ Կարո Կապլանյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 02.12.2017թ. թիվ ԴՎԱ/4380 գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով, մասնավորապես, հայտնել է.

««Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի առնչությամբ հայտնում ենք, որ Ընկերությունը նույնաբոցվանդակ գրությամբ 17.10.2017թ. դիմել էր «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և վերջինս պատասխանել էր, որ գնահատող հանձնաժողովը ծառայությունների մատուցման ժամկետի երկարացման և կնքվելիք պայմանագրում կանխավճարի տրամադրման լիազորություն չունի:

Այնուհետև, նույն գրությամբ «Ռեգնում» ՍՊԸ-ն դիմել էր պատվիրատուի ղեկավարին, որպեսզի կնքվելիք պայմանագրում նախատեսվի կանխավճար և ծառայությունների մատուցման ժամկետը երկարացվի 6 ամիս ժամկետով, որին ի պատասխան ելք դ/տ N1284 առ 24.10.207թ. գրությամբ տեղեկացրել ենք, որ բարձրացված հարցերին անդրադառնալու համար անհրաժեշտ է նախ կնքել պայմանագիրը, որից հետո անդրադառնալ խնդրո առարկա հանդիսացող հարցադրումներին»:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ «Ռեգնում» ՍՊԸ-ն սահմանված կարգով՝ էլ. փոստով ծանուցմամբ և հեռախոսազանգով, հրավիրվել է պայմանագիր կնքելու և մինչ 06.11.2017թ. դրությամբ ընկերության կողմից լիազոր ներկայացուցիչ չի ներկայացել և պայմանագիրը չի կնքել, իսկ կնքման վերջնաժամկետ էր սահմանված 01.11.2017թ.:

ՀՀ ՊՆ-ն դիրքորոշմամբ հավելել է նաև, որ.

«Համաձայն ՀՀ կառավարության 02.10.2011թ. N168-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի՝ ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու կամ պայմանագիրը կնքելուց հրաժարվելու դեպքում, պայմանագիր կնքելու առաջարկ է արվում երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին, տվյալ դեպքում երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցը «Լավ Ընկեր» ՍՊՆ-ն է:

Պատվիրատուի կողմից 07.04.2017թ. հրապարակած հրավերի 9.4 կետը, որը բխում է Օրենքի 33-րդ հոդվածի կետից, սահմանում է, որ մինչև հրավերի 9.3 կետով նախատեսված ժակետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը: Օրենքի 2-րդ հոդվածի 19-րդ կետում սահմանվում է գնման առարկայի բնութագիրը, այն է՝ «գնման առարկայի բնութագիր՝ գնման առարկայի հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները», հետևաբար, պայմանագրի նախագծում հնարավոր չէ «Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող փոփոխությունը կատարել, քանի որ այն կհանգեցնի գնման առարկայի հատկանիշների, դրանց ձեռքբերման և վճարման պայմանների փոփոխման: Նշենք նաև, որ համաձայն Օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո հրավերով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին է ներկայացնում պայմանագիր, իսկ պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից»:

«Ռեգնում» ՍՊԸ-ի բողոքով ներկայացված այն փաստը, որ 2016թ. միատեսակ հանգամանքներում հատկացվել է կանխավճար և պայմանագրի գործողության ժամկետը երկարացվել է, տեղեկացնում եմ, որ վերը նշված գործողությունները կատարվել են բացառության կարգով, հետևաբար, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքին հղում կատարելն անհիմն է»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն եզրակացնում է, որ «Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 15.11.2017թ. ներկայացված բողոքը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից, կրում է սուբյեկտիվ մեկնաբանական բնույթ և ենթակա չէ բավարարման:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Արմեն Սիմոնյանը և Արման Բաղրամյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/46 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է «Ռեգնում» ՍՊԸ-ի 15.11.2017թ. ներկայացրած բողոքը, «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի կնքման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) կողմից 2017թ. ապրիլի 7-ի թիվ 1 որոշմամբ հաստատված հրավերը, Հանձնաժողովի 16.10.2017թ. նիստի թիվ 13, 23.10.2017թ. նիստի թիվ 14, 01.11.2017թ. նիստի թիվ 15 և 02.11.2017թ. նիստի թիվ 16 արձանագրությունները, Հանձնաժողովի 2017թ. հոկտեմբերի 16-ի որոշմամբ հաստատված «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և N ՇՀԾՁԲ-4/2 պայմանագրի նախագիծը, Պատվիրատուի ներկայացուցչի դիրքորոշումը և կարծիքը, ՀՀ պաշտպանության նախարարության 02.12.2017թ. թիվ ԴՎԱ/4380 գրությունը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը բեռնատար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարել է ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել նաև «Ռեգնում» ՍՊԸ-ն և «Լավ Ընկեր» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի կողմից 19.04.2017թ. թիվ 3 արձանագրությամբ ընդունված որոշմամբ «Լավ Ընկեր» ՍՊԸ-ն 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

«Ռեգնում» ՍՊԸ-ն 14.06.2017թ. թիվ Դ-096 գրությամբ Խորհրդին ներկայացրած բողոքով Ընկերությունը պահանջել էր դադարեցնել գնահատող հանձնաժողովի 10.07.2017թ. հրապարակված որոշումը՝ 3-րդ չափաբաժնով «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին 1-ին տեղ ճանաչելու մասին որոշումը, որը Խորհրդի կողմից 14.08.2017թ. ՈԳԲԽ-ԷՍ-2017թ. որոշմամբ բավարարվել է:

Ի կատարումն Խորհրդի վերը նշված որոշման՝ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովը դադարեցրել է «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

«Ռեգնում» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները բավարար գնահատելու արդյունքում՝ Հանձնաժողովը 16.10.2017թ. նիստի թիվ 13 արձանագրությամբ որոշել է 3-րդ չափաբաժնով Ընկերությանը ճանաչել է ընտրված մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

17.10.2017թ. Ընկերությունը թիվ Դ-172 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ իր մտահոգությունը հայտնելով ընթացակարգի Հրավերով նախատեսված ժամկետներում՝ մինչև 2017թ. դեկտեմբերի 10-ը, ծառայությունների նախատեսված ծավալների մատուցումն ապահովելու կապակցությամբ: Որպես հիմնավորում Ընկերությունը նշել է վերջինիս կողմից Ընթացակարգի շրջանակներում երկու անգամ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդ դիմելու փաստը, և դրանով պայմանավորված՝ բաց թողնված ժամանակը, և առաջարկել է պայմանագիրը կնքել, եթե կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետ սահմանվի 6 ամիս՝ կնքման օրվանից մինչև 02.05.2017թ.՝ հաշվի առնելով բաց թողնված ժամկետը: Միաժամանակ, Ընկերությունն առաջարկել է կնքվելիք պայմանագրում նախատեսել կանխավճար՝ պայմանագրի գնի 100 տոկոսի չափով, համապատասխան բանկային երաշխիքի ձևով կանխավճարի ապահովում ներկայացնելու պայմանով:

23.10.2017թ. նիստի թիվ 14 արձանագրությամբ Հանձնաժողովը արձանագրել է, որ հանձնաժողովը՝ քննարկելով «Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից վերը նշված գրությունը, պատասխանել է վերջինիս գրությանը: Պատվիրատուն մասնավորապես հայտնել է Ընկերությանը, որ «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի կնքման միջոցով գնում կատարելու ընթացակարգի 3-րդ չափաբաժնով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետների երկարացման և կնքվելիք

պայմանագրում կանխավճարի տրամադրման լիազորություններ գնահատող հանձնաժողովը չունի, իսկ Հրավերով կանխավճար նախատեսված չի եղել և ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել 4-րդ եռամսյակը, բայց ոչ ուշ, քան 10.12.2017թ.:

01.11.2017թ. նիստի թիվ 15 արձանագրությամբ Հանձնաժողովը՝ քննարկելով վերոհիշյալ գրությունը՝ որոշել է պատասխանել գրությանը և հաստատել պատասխան գրության տեքստը, որում, մասնավորապես, կրկնել է նախորդ գրություններով հայտնած դիրքորոշումը:

Հանձնաժողովը 08.11.2017թ. նիստի թիվ 16 արձանագրությամբ արձանագրել է, որ պատվիրատուի ղեկավարը 06.11.2017թ. թիվ ԴՎԱ/3955 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարին և հայտնել, որ «Ռեգնում» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո հրավերով նախատեսված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովում, ուստի վերջինս զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, և անհրաժեշտ է պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին:

«Ռեգնում» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացված բողոքով հայտնել է, որ Պատվիրատուն՝ նպատակ ունենալով Ընկերության առջև մշտապես խոչընդոտներ ստեղծելու և հնարավոր բոլոր միջոցներով հաղթող ճանաչել «Լավ Ընկեր» ՍՊԸ-ին, անգործություն է ցուցաբերել իր աշխատանքում՝ անհարկի ձգձգելով Բողոքարկման խորհրդի որոշումների կատարման ժամկետները: Բողոքարկման խորհրդի կայացրած վերջին որոշումից շուրջ 2 ամիս հետո միայն Հանձնաժողովը Ընկերությանը գների նվազեցման շուրջ հրավիրել է բանակցությունների, ինչի արդյունքում «Ռեգնում» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից 3-րդ չափաբաժնով և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու որոշում է կայացրել: Հաշվի առնելով պայմանագրի կատարման համար մնացած ժամկետի սղությունը՝ Ընկերությունը 17.10.2017թ. թիվ Դ-172 և Դ-173 գրություններով դիմել է Հանձնաժողովին և ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ-ին, ներկայացնելով իր դիրքորոշումները կնքվելիք պայմանագրի նախագծի վերաբերյալ: Մասնավորապես, Ընկերությունը առաջարկել է պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել վեց ամիս՝ կնքման պահից և նախատեսել 100% կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայությամբ: Ընկերությունն իր առաջարկները հիմնավորելու համար վկայակոչել է այն փաստը, որ 2016թ. միատեսակ հանգամանքներում կնքված պայմանագրի

շրջանակներում Պատվիրատուի կողմից հատկացվել է կանխավճար և երկարացվել է պայմանագրի գործողության ժամկետը:

Բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ, Պատվիրատուի ներկայացուցիչներն ընդունեցին այն փաստը, որ Հանձնաժողովի կողմից միայն 16.10.2017թ. է որոշում կայացվել անգործության ժամկետի ավարտից հետո «Ռեգնում» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Ինչ վերաբերում է կնքվելիք պայմանագրում կանխավճար նախատեսելուն և ծառայությունների մատուցման ժամկետը 6 ամիս ժամկետով երկարացվելուն, ապա վերջիններս հայտնեցին, որ բարձրացված հարցերին անդրադառնալու համար բազմիցս հորդորել են Ընկերությանը նախ կնքել պայմանագիրը, որից հետո՝ անդրադառնալ խնդրո առարկա հանդիսացող հարցադրումներին: Պատվիրատուի ներկայացուցիչները Խորհրդին հայտնեցին նաև, որ «Ռեգնում» ՍՊԸ-ն սահմանված կարգով՝ էլ. փոստով և հեռախոսազանգով, հրավիրվել է պայմանագիր կնքելու և մինչ 06.11.2017թ. Ընկերության կողմից որևէ լիազորված ներկայացուցիչ չի ներկայացել և պայմանագիրը չի կնքել (կնքման վերջնաժամկետ էր սահմանված 01.11.2017թ)., հետևաբար Ընկերությունը զրկվել է Պայմանագիրը կնքելու իրավունքից:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)

• 23-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ (...) պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը:

• 35-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 19-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագիրը գնման առարկայի հատկանիշներն են և դրանց ձեռքբերման և վճարման պայմաններն են:

Օրենքի 33-րդ հոդվածի՝

• 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո հրավերով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի, իսկ պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

• 4-րդ հոդվածի համաձայն՝ մինչև նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-4/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի 9.4 կետի համաձայն՝ մինչև նույն հրավերի 9.3 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Ռեգնում» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո հրավերով նախատեսված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովում:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է կնքվելիք պայմանագրի նախագծում կատարել փոփոխություններ, մասնավորապես, երկարաձգել ծառայությունների մատուցման ժամկետը 6 ամիս ժամկետով, ինչպես նաև նախատեսել 100% կանխավճար:

Խորհուրդը արձանագրում է նաև, որ Հրավերի հավելված 1-ով նախատեսված ծառայությունների տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցումը նախատեսված է իրականացնել 2017թ. 4-րդ եռամսյակում համաձայն հայտերի, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ.:

Խորհուրդը գտնում է, որ կնքվելիք պայմանագրի նախագծում Ընկերության կողմից առաջարկված փոփոխությունները՝ երկարաձգել ծառայությունների մատուցման ժամկետը, ինչպես նաև պայմանագրի գնի 100 տոկոսի չափով կանխավճար նախատեսելը, իրավաչափ չէ, քանի որ նշված փոփոխությունները կհանգեցնեին գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ինչի արդյունքում կխախտվեին Օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և Հրավերի 9.4 կետով սահմանված պահանջները:

Միաժամանակ, Խորհուրդը գտնում է, որ «Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից սույն բողոքով վկայակոչված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածները սահմանում են արդեն իսկ կնքված և գործող պայմանագրերի հետ կապված հարաբերությունները:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից Բողոքով ներկայացված այն փաստին, որ 2016թ. միատեսակ հանգամանքներում կնքվելիք պայմանագրերով հատկացվել է կանխավճար և պայմանագրի գործողության ժամկետը երկարացվել է, ապա Խորհուրդը գտնում է, որ նշված փաստերը սույն բողոքին վերաբերելի չեն:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Ռեգնում» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո հրավերով նախատեսված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և այն ներկայացրել Պատվիրատուին, որի արդյունքում Պատվիրատուն՝ Ընկերությանը զրկելով պայմանագիրը ստորագրելու իրավունքից, գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ռեգնում» ՍՊԸ-ի կողմից 15.11.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ